



# Աշխատել Հաշմանդամ Լինելով. Ինչպես Մենք Կարող ենք Օգնել

## Բովանդակություն

Ստանու՞մ եք հաշմանդամության նպաստներ: Մենք կարող ենք օգնել, որ աշխատանքի վերադառնաք 2

### Social Security հաշմանդամության կանոններ

Social Security աշխատանքի խթաններ՝ մեկ հայացքով 2

Ինչպես է ձեր շահույթն ազդում ձեր Social Security նպաստների վրա 3

Ինչ գեկուցել, եթե դուք աշխատում և Social Security հաշմանդամության նպաստ եք ստանում 4

Եթե կորցնեք ձեր աշխատանքը 4

Հատուկ կանոններ կույր աշխատողների համար 4

### Supplemental Security Income (SSI) ծրագրի կանոններ

SSI աշխատանքի խթաններ՝ մեկ հայացքով 5

Plan to achieve self-support (PASS) 5

Եթե ձեր աշխատանքային նպատակն է լինել ինքնագրադ 7

Ինչպես են ձեր շահույթներն ազդում ձեր SSI վճարների վրա 8

Ինչ գեկուցել, եթե դուք աշխատում և SSI եք ստանում 8

Որքան երկար կշարունակվի ձեր Medicaid-ը 9

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ 9

## Ստանու՞մ եք հաշմանդամության նպաստներ: Մենք կարող ենք օգնել, որ աշխատանքի վերադառնաք

Եթե ստանում եք հաշմանդամության նպաստներ, ապա մենք լավ լուր ունենք ձեզ համար: Social Security-ի աշխատանքի խթանները և Ticket to Work ծրագրերը կարող են օգնել ձեզ, եթե ցանկանում եք աշխատել:

Սահմանված են հատուկ կանոններ, որոնք հնարավորություն են ընձեռում Social Security հաշմանդամության նպաստներ կամ Supplemental Security Income (SSI) ստացող անձանց աշխատել չգրկվելով իրենց ամսական վճարումներից:

Իսկ եթե դուք չեք կարող շարունակել աշխատել ձեր առողջական վիճակի պատճառով, ապա ձեր նպաստները կարող են կրկին սկսվել՝ հնարավոր է, որ պետք չլինի ներկայացնել նոր դիմում:

Աշխատանքի խթանները ներառում են՝

- Շարունակական կանխիկ դրամական նպաստներ ձեր աշխատելու ընթացքում,
- Շարունակական Medicare կամ Medicaid, մինչև աշխատում եք, և
- Օգնություն կրթության, վերապատրաստման և վերականգնման հարցում՝ աշխատանքի նոր տեսակ սկսելու նպատակով:

Social Security և SSI կանոնները տարբեր են: Սույն գրքույկում մենք բացատրում ենք յուրաքանչյուր ծրագրում գործող կանոնները: Social Security խթանները սկսվում են 2-րդ էջից, իսկ SSI խթանները սկսվում են 4-րդ էջից:

Եթե դուք ստանում եք Social Security կամ SSI, անմիջապես տեղեկացրեք մեզ երբ սկսում կամ դադարում եք աշխատելը, կամ եթե որևէ այլ փոփոխություն է տեղի ունենում, որը կարող է ազդել ձեր նպաստների վրա:

Ticket to Work ծրագիրը նույնպես կարող է օգնել, եթե ցանկանում եք աշխատել: Դուք կարող եք ստանալ՝

- Անվճար մասնագիտական վերականգնում,
- Վերապատրաստում,
- Աշխատանքի ուղեգրեր, և
- Չբաղվածության հետ կապված այլ աջակցություն:

Դուք բժշկական քննության չեք ենթարկվի մինչ օգտագործում եք անվճար “ticket”-ը և ժամանակին առաջընթաց եք արձանագրում աշխատանքի վերադառնալու ձեր ծրագրի համաձայն:

Երբ պատրաստ եք ուսումնասիրելու ձեր աշխատանքի ընտրանքները, Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք նաև այցելել Ticket to Work-ի կայքը՝ [www.choosework.ssa.gov](http://www.choosework.ssa.gov) հասցեով: մենք ունենք Ticket to Work-ի Աջակցության հեռախոսագիծ, որով կարող եք մեզ հետ խոսել աշխատանքի, նպաստների կամ մեր աշխատանքի խթանների ծրագրերի մասին: Զանգահարեք **1-866-YOURTICKET (1-866-968-7842)** հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ օրերին, 8:00-ից մինչև 20:00-ն EST: Եթե խոլ եք կամ ունեք թույլ լսողություն, կարող եք զանգահարել մեր TTY համարով՝ **1-866-833-2967**: Կամ կարող եք զանգահարել մեր անվճար հեռախոսահամարով և ինտրել Ձեր *Ticket to Work* (Հրապարակում No. 05-10061): Նաեւ մատչելի է [www.socialsecurity.gov/pubs](http://www.socialsecurity.gov/pubs):

## Social Security աշխատանքի խթաններ՝ մեկ հայացքով

(SSI ծրագրի կանոնները սկսվում են 5-րդ էջից:)

**Trial work period.** Trial work period-ը թույլ է տալիս ստուգել ձեր աշխատելու ունակություններն առնվազն ինն ամիս ժամկետով: Ձեր trial work period-ի ընթացքում դուք ամբողջությամբ կստանաք

ձեր Social Security նպաստները, անկախ նրանից, թե որքան եք վաստակում: Ձեզանից պահանջվում է միայն գեկուցել ձեր աշխատանքը և շարունակել հաշմանդամություն ունենալ: 2018թ.-ին trial work month է համարվում որևէ ամիս, երբ ձեր ընդհանուր վաստակած գումարը գերազանցում է \$850: Եթե դուք ինքնազբաղ եք, trial work month է համարվում այն ամիսը, երբ ձեր վաստակած գումարը գերազանցում է \$850 (ծախսերից հետո) կամ երբ ձեր սեփական բիզնեսի համար 80 ժամից ավել եք աշխատել: Trial work period-ը շարունակվում է մինչև դուք աշխատեք ինն ամիս 60 ամիս ժամանակահատվածում:

**Extended period of eligibility.** Ձեր trial work period-ից հետո դուք ունեք 36 ամիս, որի ընթացքում դուք կարող եք աշխատել և դեռևս նպաստներ ստանալ որևէ ամսվա համար, որի ընթացքում ձեր շահույթը «շոշափելի» չի եղել: 2018թ.-ին մենք շոշափելի ենք համարում \$1,180 շահույթը (\$1,970, եթե դուք կույր եք): Այս ժամանակահատվածում Social Security հաշմանդամության նպաստ ստանալու համար նոր դիմումի կամ հաշմանդամության մասին որոշման անհրաժեշտություն չկա:

**Expedited reinstatement.** Եթե ձեր նպաստները դադարում են ձեր շոշափելի շահույթի պատճառով, դուք ունեք հինգ տարի, որի ընթացքում կարող եք դիմել մեզ ձեր նպաստները վերսկսելու համար, եթե ձեր վիճակի պատճառով չեք կարող շարունակել աշխատել: Մինչ մենք ուսումնասիրում ենք ձեր առողջական վիճակը, հարկավոր չէ նոր դիմում ներկայացնել կամ սպասել, որ ձեր նպաստները վերսկսեն:

**Medicare-ի շարունակումը.** Եթե ձեր Social Security հաշմանդամության նպաստները դադարում են ձեր շահույթի պատճառով, սակայն դուք դեռևս հաշմանդամ եք, ձեր Medicare-ի անվճար Մաս A ապահովագրությունը կշարունակվի առնվազն 93 ամիս՝ ինն ամիս աշխատանքային փորձաշրջանից հետո:

Դրանից հետո դուք կարող եք Medicare Մաս A ապահովագրություն գնել՝ վճարելով ամսական ապահովագին: Եթե դուք Medicare Մաս B ապահովագրություն ունեք, դուք պետք է շարունակեք ապահովագին վճարել: Եթե ցանկանում եք դադարեցնել Մաս B ձեր ապահովագրությունը, ապա դա գրավոր պետք է խնդրեք:

**Ձեր հաշմանդամության հետ կապված աշխատանքային ծախսերը.** աշխատելու դեպքում, հնարավոր է, որ պետք է վճարեք որոշակի իրերի և ծառայությունների համար, որոնց համար չեն վճարում հաշմանդամություն չունեցող անձինք: Օրինակ, ձեր առողջական վիճակի պատճառով՝ դուք կարող եք աշխատանքի գնալու համար հանրային փոխադրամիջոցի փոխարեն տաքսի նստեք կամ վճարեք խորհրդատվական ծառայությունների համար: Մենք թերևս կարողանանք հասել այդ ծախսերը ձեր ամսական շահույթից, նախքան նպաստ ստանալու ձեր իրավասությունը որոշելը:

## Ինչպես է ձեր շահույթն ազդում ձեր Social Security նպաստների վրա

Trial work period-ի ընթացքում ձեր շախույթի նկատմամբ սահմանափակումներ չկան: 36 ամիս extended period of eligibility ընթացքում դուք սովորաբար չեք կարող վաստակել ամսական \$1,180-ից ավելի, այլապես ձեր նպաստները կդադարեն: Սակայն ձեր շահույթի հաշվարկման ժամանակ հաշմանդամության հետևանքով առաջացած աշխատանքային ծախսերը հանվում են: Եթե դուք ունեք լրացուցիչ աշխատանքային ծախսեր, ապա ձեր շահույթը կարող է լինել \$1,180-ից շոշափելիորեն բարձր՝ նախքան ձեր նպաստների վրա դրանց ազդելը: Այդ շոշափելի շահույթի գումարը սովորաբար աճում է ամեն տարի:

Ձեր աշխատանքային ծախսերը կարող են ներառել որևէ իրի կամ ծառայության հետ կապված ծախսեր, որոնք ձեզ անհրաժեշտ

են աշխատելու համար, նույնիսկ եթե դրանք օգտակար են նաև ձեր առօրյա կյանքում: Օրինակները ներառում են դեղատոմսային դեղերի համավճարներ, խորհրդատվական ծառայություններ, փոխադրում դեպի աշխատավայր և ետ (որոշ պայմաններում), անձնական խնամող կամ աշխատանքի վերապատրաստող, անվասայլակ կամ աշխատանքի մեջ օգտագործվող որևէ այլ մասնագիտացված սարք:

## Ինչ գեկուցել, եթե դուք աշխատում և Social Security հաշմանդամության նպաստ եք ստանում

Եթե դուք Social Security եք ստանում հաշմանդամության պատճառով, դուք կամ ձեր ներկայացուցիչն անմիջապես մեզ պետք է հայտնեք, եթե՝

- Սկսում կամ դադարում եք աշխատել,
- Դուք հայտնել եք աշխատելու մասին, սակայն ձեր պարտականությունները, ժամերը կամ վճարումը փոխվել են, կամ
- Դուք սկսել եք վճարել ձեր հաշմանդամության պատճառով ձեր աշխատանքում առաջ եկած ծախսերի համար:

Ձեր աշխատանքում տեղ գտած փոփոխությունների մասին կարող եք հայտնել հեռախոսով, փոստով կամ անձամբ: Կարող եք գտնել ձեր տեղական գրասենյակը մեր [www.socialsecurity.gov/work](http://www.socialsecurity.gov/work) կայքում: Ձեր հաշվետվությունը հաստատելու համար մենք ձեզ ստացական կտանք: Այդ ստացականն անհրաժեշտ է պահել՝ Social Security-ից ստացված մյուս կարևոր փաստաթղթերի հետ միասին:

## Եթե կորցնեք ձեր աշխատանքը

Եթե trial work period-ի ընթացքում կորցնեք ձեր աշխատանքը, դա չի ազդի ձեր նպաստների վրա: Եթե դուք կորցնեք ձեր աշխատանքը 36 ամիս extended period of eligibility-ի ընթացքում, զանգահարեք մեզ, և մենք կվերականգնենք ձեր նպաստներ, քանի դեռ դուք դեռևս հաշմանդամ եք:

## Հատուկ կանոններ կույր աշխատողների համար

Եթե դուք կույր եք և աշխատում եք Social Security նպաստներ ստանալու հետ մեկտեղ, սահմանված են հատուկ կանոններ՝

- 2018թ.-ին դուք կարող եք վաստակել ամսական մինչև \$1,970՝ նախքան ձեր շահույթը կազդի ձեր նպաստների վրա:
- Եթե ունեք շատ բարձր եկամուտ հաշմանդամության նպաստ ստանալու համար, ապա այնուամենայնիվ իրավասու եք հաշմանդամության «սառեցման» համար: Դա նշանակում է, որ ձեր ապագա նպաստները հաշվարկելու ընթացքում մենք հաշվի չենք առնի այն տարիները, երբ ձեր հաշմանդամության պատճառով ձեր շահույթը կամ փոքր էր, կամ չկար:

Դա կարող է օգնել ձեզ, որովհետև նպաստները հիմնված են ձեր աշխատանքային ստաժի ընթացքում ձեր ամենաբարձր շահույթի վրա: Կույրերի համար սահմանված հատուկ կանոնների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն ստանալու համար ընթերցեք *If You Are Blind or Have Low Vision — How We Can Help (Եթե կույր եք կամ թույլ տեսողություն ունեք. ինչպես կարող ենք օգնել)* (Հրատարակում No. 05-10052): (մատչելի է միայն անգլերենով)

## SSI աշխատանքի խթաններ՝ մեկ հայացքով

(Social Security հաշմանդամության կանոնները սկսվում են 2-րդ էջից):

**SSI-ի շարունակումը. մենք** SSI նպաստներ ենք վճարում այն անձանց, ովքեր 65 տարեկան, կույր կամ հաշմանդամ են և ցածր եկամուտ կամ սահմանափակ միջոցներ ունեն: Եթե դուք հաշմանդամ եք և աշխատում եք՝ չնայած ձեր հաշմանդամության, դուք կարող եք շարունակել վճարումներ ստանալ, քանի դեռ ձեր շահույթն՝ այլ

եկամտի հետ միասին, չի գերազանցում SSI-ի սահմանած եկամտի սահմանը: Տարբեր նահանգներում այդ սահմանը տարբեր է: Անգամ եթե ձեր SSI վճարները դադարեն, ձեր Medicaid-ի ապահովագրությունը սովորաբար կշարունակվի, եթե ձեր շահույթը ձեր նահանգի սահմանից ցածր է:

**Expedited reinstatement.** Եթե ձեր շահույթի պատճառով մենք դադարեցրել ենք ձեր վճարումները, և ձեր առողջական վիճակի պատճառով դուք կրկին չեք կարող աշխատել, ապա կարող եք դիմել մեզ ձեր վճարումները վերսկսելու խնդրանքով: Ձեզ անհրաժեշտ չի լինի ներկայացնել հաշմանդամության նոր դիմում, եթե դուք այդ խնդրանքը ներկայացնեք ձեր նպաստները դադարելու ամսից հետո հինգ տարվա ընթացքում:

**Ձեր հաշմանդամության հետ կապված աշխատանքային ծախսերը.** աշխատելու դեպքում, հնարավոր է, որ պետք է վճարեք որոշակի իրերի և ծառայությունների համար, որոնց համար չեն վճարում հաշմանդամություն չունեցող անձինք: Օրինակ, ձեր առողջական վիճակի պատճառով՝ դուք կարող եք աշխատանքի գնալու համար հանրային փոխադրամիջոցի փոխարեն տաքսի նստեք կամ վճարեք խորհրդատվական ծառայությունների համար: Մենք թերևս կարողանանք հանել այդ

ծախսերը ձեր ամսական շահույթից, նախքան նպաստ ստանալու ձեր իրավասությունը որոշելը:

**Հաշմանդամ ուսանողներ.** Եթե դուք 22 տարեկանից ցածր տարիքի եք, դպրոց եք հաճախում կամ կանոնավոր վերապատրաստման ծրագրերի եք մասնակցում, մենք չենք հաշվարկում ձեր որոշ շահույթները: 2018թ.-ին մենք չենք հաշվարկում ամսական մինչև \$1,820 շահույթը (2018թ.-ի համար առավելագույնը \$7,350), երբ մենք հաշվարկում ենք ձեր SSI նպաստը:

Ստորև մենք ամբողջ բաժին ենք նվիրում բացատրելու համար կարևոր SSI աշխատանքային խթանը՝ plan to achieve self-support կամ PASS ծրագիր:

### Plan to achieve self-support (PASS)

**Plan** to achieve self-support-ի նպատակն է՝ օգնել ձեզ ձեռք բերել ձեր աշխատանքային նպատակներին հասնելու համար անհրաժեշտ իրեր, ծառայություններ կամ հմտություններ: Ձեր աշխատանքային նպատակը պետք է կրճատի ձեր կախվածությունը SSI-ից կամ օգնի ձեզ դուրս գալ Social Security հաշմանդամության կամ SSI ցուցակներից: Ձեր աշխատանքային նպատակին հասնելու համար ծախսված որևէ գումար չի հաշվարկվի, երբ մենք պարզենք, թե ինչպես է ձեր ներկայիս եկամուտը և միջոցներն ազդում ձեր նպաստների վրա: Օրինակ, դուք կարող եք մի կողմ դնել որոշակի գումար դպրոց հաճախելու համար, որպեսզի վերապատրաստվեք աշխատանքի համար կամ բիզնես սկսեք: Դուք կարող եք խնայված գումարներն օգտագործել հետևյալի համար՝

- Փոխադրում դեպի աշխատավայր և ետ,
- Դպրոցի կամ վերապատրաստման համար անհրաժեշտ ուսման վարձ, գրքեր և պարագաներ,
- Երեխայի խնամք,
- Օգնականի խնամք,

- Զբաղվածության ծառայություններ, ինչպիսիք են՝ աշխատանքի վերաբերյալ ուսուցում կամ ռեգյուլմենտի պատրաստում,
- Աշխատանքի հետ կապված նպատակներով օգտագործվող օժանդակ տեխնոլոգիաներ,
- Բիզնես սկսելու համար անհրաժեշտ պարագաներ,
- Աշխատանք կատարելու համար անհրաժեշտ սարքավորումներ և գործիքներ, կամ
- Համագգեստներ, հատուկ հագուստ և անվտանգության սարքեր:

**Ինչպես ծրագիր կազմել.** Ծրագիրը պետք է գրավոր ներկայացվի, և Social Security պետք է հաստատի այն: Սկսելու համար կապվեք ձեր տեղական Social Security գրասենյակի հետ, որպեսզի ստանաք դիմումի ձևաթուղթը (Ձևաթուղթ SSA-545-BK): Այնուհետև, ձեր ծրագիրը մշակելու համար հետևեք ստորև նշված քայլերին՝

1. Որոշեք, թե որն է ձեր աշխատանքային նպատակը: Օրինակ, ձեր աշխատանքային նպատակը կարող է լինել ձեր ցանկացած աշխատանքը ստանալը, և դուք կարծում եք, որ կկարողանաք դա անել, երբ ավարտեք ձեր ծրագիրը: Մենք կարող ենք ուղեգրել ձեզ մասնագիտական վերականգնման խորհրդատուի մոտ, ով կարող է օգնել ձեզ պարզել ձեր աշխատանքային նպատակը: Այլ երրորդ կողմերը նույնպես կարող են օգնել ձեզ: Դուք կարող եք նաև ծրագիր կազմել՝ ձեր մասնագիտական ծառայությունների ծախսերը փակելու համար (ներառյալ՝ թեստավորումը, մասնագիտական ծառայությունները և բիզնես պլանավորումը):
2. Նշեք բոլոր այն քայլերը, որոնք անհրաժեշտ են ձեր նպատակին հասնելու համար և որքան ժամանակ կպահանջվի յուրաքանչյուր քայլն ավարտելու համար:

3. Որոշեք, թե ինչ ապրանքներ կամ ծառայություններ են ձեզ հարկավոր ձեր նպատակին հասնելու համար: Ձեր ծրագիրը պետք է ցույց տա, թե ինչպես ապրանքը կամ ծառայությունը կօգնի ձեզ հանելու ձեր նպատակին: Օրինակ, եթե ցանկանում եք աշխատել ռեստորանում, ձեզ հավանաբար անհրաժեշտ է խոհարարության դասընթացներ անցնել: Եթե ցանկանում եք համակարգչային ծրագրավորող լինել, ձեզ հավանաբար հարկավոր կլինի բարձրագույն կրթություն ստանալ: Եթե ցանկանում եք ձեր սեփական բիզնեսը սկսել, ձեզ հավանաբար հարկավոր կլինի սարքավորումներ ձեռք բերել:
4. Ձեզ անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների համար ունեցեք ծախսերի մի քանի հաշվարկներ: Մենք կհաստատենք միայն ողջամիտ արժեքով ապրանքներ և ծառայություններ:
5. Պարզեք, թե որքան գումար պետք է մեկ կողմ դնեք ամեն ամիս, որպեսզի վճարեք այդ ապրանքների և ծառայությունների համար: Եթե ձեր ծրագրի համար ձեր եկամուտն եք մի կողմ դնում, ձեր SSI վճարները հիմնականում կավելանան՝ օգնելով ձեզ հոգալ ձեր առօրյա ծախսերը: Մենք կարող ենք հաշվարկել, թե որքան կլինի ձեր նոր SSI գումարը, եթե մենք հաստատենք ձեր ծրագիրը:
6. Տեղեկացրեք մեզ, թե ինչպես եք ձեր ծրագրի ֆինանսներն առանձին պահում ձեր ունեցած որևէ այլ գումարներից: Դա անելու ամենահեշտ ձևը՝ ձեր ծրագրի նպատակով կուտակված գումարի համար առանձին բանկային հաշիվ բացելն է:
7. Լրացրեք Ձևաթուղթ SSA-545-BK-ի ԲՈԼՈՐ հարցերը, ստորագրեք այն և թվագրեք: Վստահ եղեք, որ ձևաթղթում նշված են ձեր ճիշտ հասցեն և հեռախոսահամարը:
8. Անձամբ տարեք կամ փոստով ուղարկեք ձեր լրացրած ձևաթուղթը ձեր տեղական Social Security գրասենյակ:



Եթե ձեր ծրագիրը գրելու հարցում օգնություն է հարկավոր, ձեր տեղական Social Security գրասենյակը կարող է կամ օգնել ձեզ, կամ ուղեգրել ձեզ ձեր տեղական կազմակերպություն, որը կարող է օգնել ձեզ:

## Եթե ձեր աշխատանքային նպատակն է լինել ինքնագրադ

Ձեր դիմումին կցեք մանրամասն բիզնես ծրագիր, եթե ցանկանում եք սեփական բիզնես սկսել: Ձեր բիզնես ծրագիրը պետք է բացատրի՝

- Ինչ տեսակի բիզնես եք ցանկանում սկսել (օրինակ, ռեստորան կամ տպագրական խանութ),
- Որտեղ եք հիմնելու ձեր բիզնեսը (օրինակ, խանութի վարձակալություն, համատեղ օգտագործվող տարածք),
- Ձեր աշխատանքային ժամերը,
- Ովքեր են լինելու ձեր հաճախորդները, մատակարարները և մրցակիցները,
- Ինչպես եք գովազդելու ձեր ապրանքը կամ ծառայությունը,
- Ինչպիսի ապրանքներ և ծառայություններ են հարկավոր բիզնեսը սկսելու համար,
- Ինչ կարծես են այդ ապրանքները և ծառայությունները,
- Ինչպես եք պատրաստվում վճարել այդ ապրանքների և ծառայությունների համար, և
- Ձեր ակնկալվող վաստակը բիզնեսի առաջին չորս տարվա ընթացքում:

**ԾԱՆՈՒՑՈՒՄ.** *Մենք խրախուսում ենք ձեզ գրուցել մեկի հետ, ով կարող է օգնել ձեզ բիզնես ծրագիր գրելու հարցում: Դա կարող է լինել որևէ մեկը Small Business Administration-ից, Թոշակառու կառավարիչների ծառայության կորպուսից, մասնագիտական խորհրդատու, տեղական բանկիր կամ որևէ մեկը, ով նախկինում օգնել է մարդկանց բիզնես սկսելու հարցում: Այս օգնության հետ կապված որևէ ծախս կարող եք ներառել ձեր բիզնես ծրագրի մեջ:*

**Social Security-ն պետք է գնահատի ձեր ծրագիրը.** ձեր դիմումը ներկայացնելուց հետո Social Security-ի ծրագրի մասնագետը՝

- Կուսումնասիրի ծրագիրը՝ վստահ լինելու համար, որ այն ամբողջական է,
- Կորոշի, թե արդյոք ձեր ծրագիրը ձեզ լավ հնարավորություն կընձեռնի ձեր նպատակին հասնելու համար,
- Կորոշի, թե արդյոք նշված ծախսերն անհրաժեշտ են նպատակին հասնելու համար, և թե արդյոք դրանք ողջամիտ են,
- Կորոշի, թե արդյոք ձեր ծրագրին անհրաժեշտ են որոշ փոփոխություններ, և կքննարկի դրանք ձեզ հետ, և
- Ձեզ նամակ կուղարկի՝ տեղեկացնելով, թե արդյոք մենք հաստատել կամ մերժել ենք ձեր ծրագիրը:

Եթե մենք հաստատենք ձեր ծրագիրը, մասնագետը պարբերաբար կապ կհաստատի ձեզ հետ՝ վստահ լինելու համար, որ դուք հետևում եք ձեր նպատակին հասնելու համար մշակված ծրագրին: Անպայման պահեք ծրագրի շրջանակներում ձեռք բերված ապրանքների և ծառայությունների ստացականները:

**Եթե մենք մերժենք ձեր ծրագիրը, դուք կարող եք բողոքարկել.** Եթե մենք չհաստատենք ձեր ծրագիրը, դուք իրավունք ունեք բողոքարկելու մեր որոշումը: Նամակը, որ կստանաք, կբացատրի բողոքարկման ձեր իրավունքները և կտեղեկացնի, թե ինչպես բողոքարկում ներկայացնել: Դուք կարող եք նաև նոր ծրագիր ներկայացնել մեզ:

**Եթե մենք հաստատենք ձեր ծրագիրը, դուք կարող եք փոփոխություններ կատարել.** Եթե հետագայում որոշեք փոփոխել ձեր ծրագիրը, կարող եք դա անել: Սակայն, որևէ փոփոխություն անելուց առաջ դուք պետք է հաստատում ստանաք Social Security-ից: Գրավոր տեղեկացրեք մեզ, թե ինչ փոփոխություններ եք ցանկանում կատարել, ինչպես օրինակ՝ յուրաքանչյուր ամիս մի կողմ դրվող գումարի հարցում կամ փոփոխություններ ձեր ունեցած ծախսերի

վերաբերյալ: Մասնագետը կուսումնասիրի փոփոխությունը և կտեղեկացնի, թե արդյոք մենք հաստատում ենք այն: Մեզ անմիջապես տեղեկացրեք այն փոփոխությունների մասին, որոնք կազդեն ձեր ծրագրի վրա:

**Տեղեկացրեք մեզ, եթե չեք կարող ավարտել ձեր ծրագիրը.** կապվեք ձեր Social Security գրասենյակի հետ, եթե որոշեք, որ չեք կարող շարունակել ձեր ծրագիր իրականացումը: Ծրագրի մասնագետը, միգուցե, կկարողանա օգնել ձեզ որոշ փոփոխություններ կատարել ձեր ծրագրում՝ ձեր նպատակին հասնելու համար: Կամ կարող եք նոր ծրագիր գրել՝ նոր աշխատանքային նպատակով:

Եթե դուք չավարտեք ձեր ծրագիրը, մենք կսկսենք հաշվարկել ծրագրի նպատակով ձեր կողմից մի կողմ դրված եկամուտը կամ միջոցները, երբ մենք հաշվարկում ենք ձեր SSI ամսական նպաստները: Սա նշանակում է, որ, հավանաբար, ձեր SSI վճարները կարող են պակասել կամ դադարել: Եթե շատ երկար սպասեք մեզ տեղեկացնելու համար, որ դադարել եք աշխատել ձեր ծրագրի վրա, դուք կարող եք չափազանց շատ SSI ստանալ: Հետագայում դուք ստիպված կլինեք հետ վճարել SSI վճարները, որոնք ստացել եք այն բանից հետո, երբ դադարել եք աշխատել ձեր ծրագրի վրա: Հիշեք, որ կարող եք նաև նոր ծրագիր գրել՝ նոր աշխատանքային նպատակով:

## Ինչպես են ձեր շահույթներն ազդում ձեր SSI վճարների վրա

Ձեր SSI վճարների գումարը կախված է ձեր ստացվող եկամուտից: Երբ մեծանում է ձեր այլ եկամուտը, սովորաբար ձեր SSI-ի վճարները նվազում են: Հետևաբար, երբ դուք վաստակում եք SSI սահմանաչափից ավելի, այդ ամիսների համար ձեր վճարումները դադարեցվում են: Սակայն, ձեր վճարները ինքնաբերաբար կվերսկսվեն ցանկացած այն ամսվա համար, երբ ձեր եկամուտը SSI

սահմանաչափից ցածր լինի: Տեղեկացրեք մեզ, եթե ձեր եկամուտները կրճատվեն, կամ եթե դուք դադարեք աշխատել:

Եթե բացի SSI-ից, ձեր միակ եկամուտը հանդիսանում է ձեր աշխատանքից ստացվող գումարն, ապա մենք հաշվի չենք առնում ձեր ամսական հասույթի առաջին \$85-ը: Յուրաքանչյուր ամիս մենք կրճատում ենք ձեր SSI նպաստները 50 ցենտով՝ \$85-ից ավել վաստակած յուրաքանչյուր դոլարից:

**Օրինակ,** դուք աշխատում և վաստակում եք ամսական \$1,000, և ձեր միակ եկամուտը ձեր շահույթն է և ձեր SSI-ը:

$$\begin{array}{r} \$1,000 \\ -\$85 \\ \hline \$915 \quad \text{բաժանած 2-ի} = \$457.50 \end{array}$$

Ձեր SSI վճարից մենք կհանենք \$457.50:

Դուք կարող եք իրավասու լինել ինքնաջակցության հասնելու ծրագրի համար, որը թույլ է տալիս դրամն ու միջոցներն օգտագործել որոշակի աշխատանքային նպատակով: Այդ դրամական միջոցները հաշվի չեն առնվում, երբ մենք գնահատում ենք, թե որքանով է ձեր առկա եկամուտը և միջոցներն ազդում ձեր նպաստների գումարի վրա:

## Ինչ գեկուցել, եթե դուք աշխատում և SSI եք ստանում

Եթե Դուք SSI եք ստանում, դուք պետք է անմիջապես հայտնեք մեզ, եթե՝

- Սկսում կամ դադարում եք աշխատել,
- Ձեր պարտականությունները, ժամերը կամ վճարումը փոփոխվում են, կամ
- Դուք սկսել եք վճարել ձեր հաշմանդամության պատճառով ձեր աշխատանքում գոյացած ծախսերի համար:

Ձեր ամսական շահույթի մասին պետք է գեկուցեք՝



- Չանգահարելով **1-800-772-1213** անվճար հեռախոսահամարով կամ մեր TTY համարով՝ **1-800-325-0778**, եթե խուլ եք կամ լսողության հետ կապված խնդիրներ ունեք, ոչ ուշ, քան մինչև հաջորդ ամսվա 6-րդ օրը, կամ
- Փոստով ուղարկելով կամ ձեր տեղական Social Security գրասենյակ անձամբ բերելով ձեր վճարման չեկերի կտրոնները՝ հաջորդ ամսվա 10-րդ օրից ոչ ուշ:

Կարող եք գտնել ձեր տեղական գրասենյակը մեր **[www.socialsecurity.gov](http://www.socialsecurity.gov)** կայքում: Ձեր հաշվետվությունը հաստատելու համար մենք ստացական կտանք: Այդ ստացականն անհրաժեշտ է պահել Social Security-ից ստացված մյուս կարևոր փաստաթղթերի հետ միասին:

Հեռախոսակապ ունեցող շատ անձինք կարող են իրենց աշխատավարձը գեկուցել աշխատավարձի գեկուցման ավտոմատացված համակարգի միջոցով: Հեռախոսով շահույթի մասին գեկուցելով՝ դուք խնայում եք թուղթը, փոստային ծախսերն ու ձեր ժամանակը, քանի որ վերանում է աշխատավարձի մասին վկայող թղթերը պատճենահանելու և ֆաքսով կամ փոստով տեղական գրասենյակ ուղարկելու անհրաժեշտությունը: Գրանցվելու համար դիմեք Social Security:

Շահույթը գեկուցելու մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ընթերցեք *Reporting Wages When You Receive Supplemental Security Income (SSI)* (Ինչպես գեկուցել աշխատավարձը՝ Supplemental Security Income (SSI) ստանալիս) (Հրապարակում No. 05-10503): (մատչելի է միայն անգլերենով)

## Որքան երկար կշարունակվի ձեր Medicaid-ը

Սովորաբար ձեր Medicaid-ի ապահովագրությունը կշարունակվի, նույնիսկ եթե ձեր SSI-ի վճարները դադարել են, մինչև ձեր եկամուտը հասնի որոշակի մակարդակի:

Այդ մակարդակը տարբեր է յուրաքանչյուր նահանգում և արտացոլում է ձեր նահանգում առողջապահության հետ կապված ծախսերը: Մենք կարող ենք ձեզ ասել ձեր նահանգում Medicaid-ի մակարդակը: Այնուամենայնիվ, եթե ձեր առողջապահության հետ կապված ծախսերն այս մակարդակից բարձր են, դուք կարող եք ունենալ ավելի շատ եկամուտ և պահպանել ձեր Medicaid-ը: Նահանգների մեծ մասում, որպեսզի ձեր Medicaid-ը շարունակվի դուք պետք է՝

- Ունենաք դրա կարիքն՝ աշխատելու նպատակով,
- Հնարավորություն չունենաք հոգալու այդ ծախսերն առանց SSI-ի,
- Շարունակեք հաշմանդամ լինել, և
- Բավարարեք SSI-ի համար իրավասության բոլոր մյուս պահանջները:

Եթե դուք որակավորվում եք Medicaid-ի համար՝ այս կանոնների համաձայն, ապա մեր կողմից ձեր գործը ժամանակ առ ժամանակ կվերանայվի, որպեսզի տեսնենք, թե արդյոք դուք դեռևս հաշմանդամ կամ կույր եք, և դեռևս վաստակում եք ձեր նահանգի թույլատրելի մակարդակից ցածր:

## Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

## Այեցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնությունն վարելու ամենհարմար եղանակը դա մեր՝ **www.socialsecurity.gov** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովությունն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement (Սոցիալական Ապահովության հաշվետվությունը)* դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Լշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը)՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ

Նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

## Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Չանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:



Securing today  
and tomorrow

Social Security Administration

Publication No. 05-10095-AM | March 2018

Վշխատել Հաշմանդամ Լինելով. Ինչպես Մենք Կարող ենք Օգնել

Working While Disabled: How We Can Help (Armenian)

Produced and published at U.S. taxpayer expense

Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: